ընդ իս զերկու հազար նոյնով տպով տպեցեալ մետալս, զորս խնդրեալ էիր։ Բայց որով-հետև զրոյց եղև ի վերայ մետալի, ծանուցանեմ գերյարգելութեանդ ևս զայս, թէ տեսեալ մեր զի մինչև ցայժմ ի բովանդակ հոսմ ոչ զոյր և ոչ է եղեալ տիպ և մետալ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, թէպէտ զոյ նորին պատկերաւ զառն Աստուծոյ և իւր տիպն. վասն որոյ և յոյժ ջանացաք ևս և մեր եղբայր տէր Մինասն զի գտանիցի ևս մետալ նոյնոյ սրբոյն, և արդէն իսկ ահա հասաք ըղձից մերոց։ Քանզի ի պատիւ սրբոյն կա-մօքն Աստուծոյ ներ այսմ ամսոջ չինեցաւ կարի լաւ և գեղեցիկ տիպ մի մետալի նոյնոյ սրբոյն գրիգորի, և շուրջ զնովաւ երևի հայկական տառիւք գրեցեալ անուն սրբոյն այսպէս.

Սբ. Գրիգ. Լուս. Հայ։

Ըստ որում և կայ գրեցեալ ի վերայ ասացեալ զառն աստուածային, որոյ և պատ-կերին նման է ամենևին տիպս այս, որոյ և ձևն բոլորակ է, և մեծութիւնն չափաւոր և հասարակ. ի մի կողմն ուրեմն մետալիս այսպիսւոյ լինի պատկեր սուրբ գրիգորի։ Իսկ ի միւս կողմն լինելոց է՝ Աստուածածին հանդերձ Քրիստոսիւ ի գիրկս իւր և կամ խաչելութիւնն Քրիստոսի. զինն սոյնոյ մետալիս, չինօղն կու խնդրէ հարիւրին տասը ճիւլի և պակաս չիտար։ Ինչևիցէ զայսքան կարճառօտաբար յօժարեցայ ծանուցանել հայրութեանդ գերյարգելւոյ, զի եթէ հաճոյ թուիցի ձեզ ևս գնել յայսպիսի մետալացս, թարց յապաղման և շուտով ծանուցէք ինձ, զորքան կամիք. և մանաւանդ եթէ փոխա-նակ վերոյասացեալ երկու հազար մետալին կամիցիք առնուլ ըստ մասին և յայսպիսի մետալ, ձեր կամքն է։ Դարձեալ ի միասին ծանուցէք ինձ և զայս թէ արդեօք ձեր մե-տալներն օրինել տամ փափին թէ ոչ կամ թէ այնպէս բերից չօրհնած։...

Գերյարգելութեանդ

Ի Հռոմ
Հոկտեմբ. 19
1720

Պատրաստական ծառայ
Ստեփաննոս վարդապետ

ԻԲ.

Նամակագիրս է Յարութիւն արքեպս. Լեւոնեան[1]։ Իր այս ներկայ գիրը կարելի է անուանել ինքնակենսագրութեան մը հետաքրքրական մասը, ինչ որ պիտի ծառայէ մեզ քիչ մ'աւելի ծանօթանալու իր անձին շուրջ։

Պատուելագունեղ և գերարգելի Տեառն Մխիթար աբբայի
և ածաբանուրեան վրդպի բազմաւ սիրով ողջոյն ի քս։

Ցայտարարութիւն լիցի վերոյ գրեցեալ տեառնդ, որ այժմ ԻԱ ամիս եղև որ ի տեղոյտ զատուեր եմ. բնաւ մին բան չի լուայ զորկենութենէ ձերմէ և տեղոյտ. մին քանի անգամ սարգսին գրեցի ոչ մին պատասխանի չի ընկալայ։ Նաև մատրիտ երկու ուխտաւոր պատահեցաւ մինն թօխաթցի և միւսն արզրումցի. թօխաթցուն մին գիր տուի ձեր հրամնուցն, չեմ գիտեր հասաւ թէ ոչ. յետ որոյ եկի կատիս մին գիր ևս գրեցի և մին երևանցի կու գնար ի ճէնուայ եւոու նր և ասացի թէ Վէնէտիկու փոստն գցէ, չեմ գիտեր հասաւ թէ ոչ։ Մին քանի օրէն եւոոյ սահակն եկաւ ալիզպօնայէն և ի միւսում աւուրն ելայ մին ֆռանսզի նաւով դէպ լիզպօնայ։ Ը օրն գնացինք, քամի

1. Տես մեր ծանօթութիւնը Բազմավէպ 1922, թ. 3, էջ 94։